ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«09» «սեպտեմբեր» 2025թ. N 0516.1/06.500-2025

«ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ԱՁ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
Էլ. հասցեն՝ vanik-avetisyan67@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

Արմավիրի մարզպետի աշխատակազմի և «Արտակ Խաչատրյան » ԱՁ-ի միջև 2025թ-ի մարտի 20-ին կնքվել է ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/05-3 պետական գնման պայմանագիր: ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմը հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 20-ին կնքած Ն ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/05-3 ծածկագրով գնման պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերը, 2025 թվականի սեպտեմբերի 9-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը և ընկերությանը շնորհված 4-րդ չափաբաժինը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արտակ Խաչատրյան» ԱՁ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից կիրառվում է տուգանք (Պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարի 0.05%-ի չափով)՝ 212 241.6 (երկու հարյուր տասներկու հազար երկու հարյուր քառասուն մեկ ամբողջ վեց) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետական 900001045567 հաշվեհամարին:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ /060/-90-10-10, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com

Պայմանագիրը կհամարվի ամբողջությամբ լուծված Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ Հավելված 3.2 և Հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությունը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները 3204000 (երեք միլիոն երկու հարյուր չորս հազար) ՀՀ դրամ (որակավորման ապահովում) և 2136000 (երկու միլիոն հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ (պայմանագրի ապահովում) ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետական՝ համապատասխանաբար 900008000698 և 900008000664 հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն «Արտակ Խաչատրյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Գնորդը կներկայացնի լիազոր մարմին:

Недействительная подпись

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության ավագ մասնագետ՝
Անահիտ Պողոսյան
Հեռ.՝ /060/-90-10-10/023/

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ /060/-90-10-10, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com